

ՄԵՂԳԸ ՍԻՐԵԼԸ՝ ԴԺՈՒՖ ԿԸ ՏԱՆԻ

Մեղքը չէ, որ քեզ պիտի դատապարտէ ու դժոխք նետէ, այլ՝ մեղքի հանդէպ ունեցած սերդ: Նուազեցնելու համար մեղքի հանդէպ մեր սերը, պէտք է առատացնենք մեր սերը հանդէպ Յիսուսի: Դժոխք երթալու համար պէտք չունինք սուտ խօսելու, շնութիւն ընելու, հայիոյելու եւ այլ ու այլ զազիր մեղքեր գործելու, կը բաւէ, որ մերժենք Յիսուսը՝ եւ արդէն դժոխք կը նետւինք: Եթէ Յիսուսը մերժելը դժոխք երթալ է, ապա զայն ընդունիլը՝ արքայութենէն ներս մուտք գործել է: Սիրելի՛ բարեկամ, ի՞նչ բան կամ որո՞ւն կը սիրես. մե՞ղքը, թէ՛ մեղքէն քեզ ազատող Յիսուսը: Փշտասա՞կը, թէ՛ փրկութեան սաղաւարտը: Եթէ կը սիրես Յիսուսը, փաստէ այդ, ինքզինքդ իրեն յանձնելով ու վստահելով:

ԱՌԱԿ 14

Ճշմարտախօս վկան իր հոգին կը փրկէ, բայց նեմգաւորը ստախօսութեամբ իր անձը կը բորբոքէ:

Տիրոջ երկիւղը ունեցողը ապահովութիւն կ'ունենայ եւ իր որդիներուն մնայուն խաղաղութիւն կը կտակէ:

Տիրոջ պատգամը կեանքի աղբիւր է, որ հեռու կը պահէ մարդը մահուան որոգայթներէն:

ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ ԳԻՏՆԱԸ, ԹԵ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՊԱԻՆՈՂԸ ԻՆՉ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՏՆԷ, ԿԱՐՊԱ՝ Սաղմոս 18

Կը սիրե՛մ քեզ, Տէ՛ր՝ գորութի՛ւնս, Տէ՛ր իմ վէ՛մս, ամբութիւնս ու փրկի՛չս: Աստուածս իմ պարի՛սպս է, ես անոր կ'ապաւինիմ: Իմ վահանս է ան, փրկութեանս գորութիւնը, եւ իմ բարձր աշտարակս:

Օրհնեցութեամբ Տէ՛րը օգնութեան կանչեցի, եւ զիս ազատեց թշնամիներէս: Մահուան տագնապը զիս պաշարեց, կորուստի հեղեղները խոռվեցուցին զիս, մահուան աշխարհը զիս պաշարեց, եւ մահուան որոգայթները լարուեցան ինձի դէմ: Նեղութեանս մէջ ՏԻՐՈՋ դիմեցի, փրկութեան համար իմ Աստուծոյս աղաղակեցի, եւ անկա իր տանաբէն լսեց ձայնս, աղաղակս անոր ականջը հասաւ: Այն ատեն երկիրը սասանեցաւ ու դողաց լեռներուն հիմերը շարժեցան ու սասանեցան անոր բարկութենէն: Անոր բիթէն ծուխ բարձրա՛ւաւ, բերնէն լափող կրակ ժայթքեց եւ կայծակներ սուրացին ամէն կողմ: Անկա երկինքը խոնարհեցուց եւ իջաւ թանձր ամպի վրայ կանգնած: Բերովբէի մը վրայ հեծաւ եւ թռաւ, ու հովին թեւերով սլացաւ:

Սիրելի ընթերցող, ճՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՏԷ.

ՃՐԱԳ ԸՄԲԱԾԱԾԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak Ծրագր թերթ



ԶՈՒ ԽՕՍԲԵՂ ԽՍ ՂՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸՄԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԳ. ՏԱՐԻ

ԿՐԱԿԻ , 12 ՅՈՒՆԻՍ 2020

ԹԻՒ 28

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱԸՆԶԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Եւ. 3.1-11: Հո. 11.13-24:

ՅԻՍՈՒՍ ԸՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍ 14.13-21

ՅԻՍՈՒՍ ԸՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 14.13-21

Երբ Յիսուս Յովհաննէսի գլխատումը լսեց, նաւակով մեկնեցաւ այդտեղէն եւ առանձին գնաց ամայի վայր մը: Շրջանի քաղաքներուն բնակիչները լսելով ասիկա, քալելով հետեւեցան իրեն: Երբ Յիսուս նաւակէն դուրս ելաւ, տեսաւ մեծ բազմութիւնը, զքաց անոնց վրայ եւ հիւանդները բժշկեց:

Երեկոյեան, իր աշակերտները իրեն մօտեցան եւ ըսին. «Ամայի տեղ ենք եւ ժամանակն ալ ուշ է: Արձակէ՛ ժողովուրդը, որպէսզի երթան շրջակայ գիւղերը իրենց համար ուտելիք գնելու»:

Յիսուս ըսաւ. «Ինչո՞ւ իրենք երթան: Դուք տուէ՛ք անոնց ուտելիքը»: Անոնք ըսին Յիսուսի. «Հոս գրեթէ ոչինչ ունինք, բացի հինգ հացէ եւ երկու ձուկէ»:

Յիսուս ըսաւ. «Հոս բերէ՛ք աստոնք»: Եւ հրամայեց, որ ժողովուրդը նստեցնեն խոտին վրայ: Ապա առաւ հինգ հացը եւ երկու ձուկը, փառք տուաւ Աստուծոյ, օրհնեց, կտրեց հացերը եւ տուաւ աշակերտներուն, որոնք բաշխեցին ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու կշտացան եւ աշակերտները աւելցած կտորները հաւաքելով տասներկու սակառ լեցուցին: Իսկ ուտողներուն թիւը շուրջ հինգ հազար էր, կիներն ու մանուկները չհաշուած:

ՍՈՒՐԲ ԳԻՐԿԸ ԿԸ ՓՈԽԷ ՄԵՐ ԿԵԱՆԻՔԸ

Կը պատմուի, թէ հիւսիսային Ափրիկէի մէջ մարդակեր մը դարձեալ կու գայ եւ ինքզինք կը նուիրէ աղօթքի եւ Սուրբ Գիրքի ընթերցանութեան: Օր մը հանրային պարտէզի մը մէջ նստած երբ Սուրբ Գիրք կը կարդար: Ամերիկացի մը կը տեսնէ զինք եւ ծաղրելով կ'ըսէ. «Դու՛ն, ո՛վ Ափրիկեցի, դո՛ւն ալ սկսար Սուրբ Գիրք կարդալ»: Նորադարձ Ափրիկեցին կը պատասխանէ ըսելով. «Եթէ Սուրբ Գիրք չկարդայի, դուն հիմա իմ ցաշս եղած պիտի ըլլայիր»: Այս պատմութիւնը մեզի կը սորվեցնէ, թէ ինչպէս Սուրբ Գիրքը կրնայ փոխել մարդուն կեանքն ու նկարագիրը: Ատիկա մարդակեր մարդը կը վերածէ մարդասէր մարդու:

**ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՎԱՎԿԱՆԵՐ**

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻՆ ԳԻՐՔԸ
3.1-11**

Ահաւասիկ, երկնաւոր Զօրքերու Տէրը Հրէաստանն ու Երուսաղէմը պիտի գրկէ իրենց գօրուփիւնը եղող նեցուկներէն, հացի եւ ջուրի ամբողջ պաշարէն:

Այ պիտի չունենան ո՛չ յաղթ կտրիմ ու պատերազմիկ, ո՛չ դատաւոր ու մարգարէ, ո՛չ գուշակ եւ երէց, ո՛չ յիւնապետ ու հիանալի խորհրդատու, ո՛չ իմաստուն մարտարապետ եւ ո՛չ ալ մարպիկ կախարդ:

Դեռահաս պատանիներ իշխան պիտի կարգեմ անոնց վրայ եւ քննադատներ իրենց վրայ եւ քննադատներ իրենց վրայ:

Մարդիկ իրարու պիտի իյնան, ընկերն իր ընկերոջ պիտի կեղեքէ. երիտասարդը արհամարհանով պիտի ընդդիմախօսէ ծերին եւ գոեցիկը՝ ազնուականին:

Այն ատեն ամէն մէկը իր եղբայրը կամ հօրը ընտանիքին մէկ անդամը պիտի բռնէ եւ ըսէ. «Դուն պատմունքան ունիս, եկուր մեր իշխանը եղի՛ր եւ մեր ուտելիքը դուն հայթայթէ՛»:

Իսկ անիկա պիտի պատասխանէ. «Ես ձեզի օգտակար չեմ կրնար ըլլալ, որովհետեւ ո՛չ ուտելիք ունիմ տունս, ո՛չ հագուելիք. այս ժողովուրդին իշխան չեմ ըլլար»:

Երուսաղէմը լճուցաւ եւ Հրէաստանը կործանեցաւ, որովհետեւ իրենց բնակիչները անօրէնութիւն խօսեցան եւ Տիրոջ հակառակ գործեցին:

Ուստի իրենց փառքը նսեմացաւ, իրենց երեսէն ամօթը վերցուցաւ. Խորհրդացիներուն պէս իրենց մեղքերով պարծեցան, առանց ծածկելու: Վա՛յ իրենց. իրենք իրենց գլխուն չարիք բերին:

**Շարունակել
Աստուածաշունչէն**



ՀՈՌՎԱՍԵՑԻՆԵՐՈՒՆ 11.13-24

Ձեզի՛ հեթանոսներուդ կ'ըսեմ, հեթանոսներու առաքեալ ըլլալու իմ պաշտօնովս կը պարծեմամ մտածելով, որ թերեւս այս ձեռով ազգակիցներուս նախանձր գրգռեմ եւ յաջողիմ անոնցմէ ումանք փրկել: Որովհետեւ, եթէ Աստուած զանոնք մերժեց, որպէսզի հեթանոս աշխարհը հաշտեցնէ իրեն հետ կը նշանակէ, թէ երբ վերստին ընդունի զանոնք՝ մեռելներու յարութիւնը տեղի պիտի ունենայ:

Թէ Աստուած վերստին պիտի ընդունի զանոնք՝ յստակ է, որովհետեւ երբ բերքին երախայրիքը Աստուծոյ ընծայուած է կը նշանակէ, թէ ամբողջը Աստուծոյ ընծայուած է: Նոյնպէս, եթէ ծառին արմատները Աստուծոյ նուիրուած են կը նշանակէ, թէ միւրեքն ալ Աստուծոյ նուիրուած են: Ճիշդ է, որ այդ միւրեքն ումանք կտրուեցան եւ դու, որ վայրի ձիթենի մըն էիր՝ անոնց տեղ պատուաստուեցար եւ այդ ձիթենիին արմատներէն եկող հարուստ աւիշը ըմպեցիր: Բայց մի՛ պարծենար եւ մի՛ արհամարհեիր կտրած միւրեքը: Մի՛ մոռնար, որ դո՛ւն արմատներուն վրայ հաստատուած ես եւ ո՛չ թէ արմատները քու վրայ: Հիմա պիտի ըսես. «Աստուած այդ միւրեքը կտրեց զի՛ս պատուաստելու համար»: Իրաւ է: Անոնք՝ հրեաները կտրուեցան, որովհետեւ չհաւատացին եւ դուն՝ հեթանոսը, հաւատալուդ համար արմատին վրայ հաստատուեցար, բայց մի՛ հպարտանար, այլ վախցի՛ր:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

**ՍՐԲՈՑ՝ ԵՐԿՈՏԱՍԱՆ ԱՌԱՔԵԼՈՅՆ
ԵՐԿՈՏԱՍԻ ԵՒ ՊՕՂՈՍԻ ԵՐԵՇՏԱ-
ՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՔԵԼՈՅՆ**

Պօղոս Առաքեալ

Քրիստոսի յարութենէն ու համբարձումէն ետք ընտրուած առաքեալը՝ Պօղոս առաքեալ, եղաւ քրիստոնէութիւնը տարածող եւ քարոզող մեծագոյն առաքեալը: Ան իր հրեական ծագումով, ստացած յունական կրթութեամբ եւ հռոմէական հպատակութեամբ, կը դառնայ ընտիր անօթ լաւագոյնս տարածելու քրիստոնէութիւնը այն ժամանակուան մշակոյթին համապատասխան մօտեցումով եւ իր հռոմէական հպատակութենէն օգտուելով:

Պօղոս առաքեալ, որ նախապէս կը կոչուէր Սօղոս, ծնած է Կիլիկիոյ Տարսոն քաղաքին մէջ, բայց սնած Երուսաղէմի մէջ, Գամաղիէի ձեռքին տակ հրեական ճշմարիտ օրէնքով (Գրծ. 22.3): Ան եղած է փարիսէցի եւ թունդ ազգայնական:

Քրիստոնէական եկեղեցոյ առաջին շրջանին, Պօղոսի մեծագոյն մըրտահոգութիւնը կ'ըլլայ հալածել քրիստոնէաները եւ բանտարկելով, հրէութեան վերադարձնել զանոնք: Ան Երուսաղէմի մէջ բոլորէն ճանչցուելով իբրեւ հակառակորդ նոր կրօնքին, կը խնդրէ քահանայապետէն, որպէսզի Դամասկոս երթայ ու այնտեղ եւս հալածէ քրիստոնէաները եւ բանտ նետէ զանոնք: Սակայն Դամասկոսի ճամբուն վրայ Քրիստոս կը յայտնուի իրեն եւ դարձի կը բերէ, զինք ընտրելով իբրեւ մեծագոյն քարոզիչը Քրիստոնէութեան:

Այսպիսով Պօղոս, այս անգամ Մեծագոյն եւ ճշմարիտ Քահանայապետէն առաքուելով, կը կազմակերպէ ճամբորդութիւններ, որոնք կ'ըլլան իր առաքելութեան ամենէն գործօն ժամանակները եւ առիթները:

Ան կը հիմնէ եկեղեցիներ եւ իր ճամբորդութիւններէն ետք նամակներ դրկելով անոնց, կը քաջալերէ զիրենք մնալու այն հաւատքին մէջ, որ ինք քարոզած է իրենց: Պօղոս առաքեալի նամակները Նոր Կտակարանին մէջ, թիով 14 հատ են:

Պօղոս առաքեալի կատարած երեք ճամբորդութիւններուն մասին կը պատմէ Գործք Առաքելոց գիրքը, ուր հեղինակը ներկայացնելով Պօղոսի վերջին ճամբորդութիւնը դէպի Հռոմ, կը փակէ գիրքը:

Աւանդութեան համաձայն, Պօղոս կը հասնի մինչեւ Սպանիա եւ ապա վերադառնալով Հռոմ այնտեղ սուրով կը նահատակուի:

**ՀԱՐՑՈՒՄ-ՊԱՏՃԱՍԽԱՆՍ
ԲԱԺԻՆ**

**Ո՞Վ Է ՊԱՏԱՐԱԳԻ
ԽՈՐՀՈՒՐԳԸ ՀԱՍՏԱՏՈՂԸ**

Յիսուս Քրիստոս՝ իր մատուցեալ երեկոյցին: Երբ վերնատունը իր աշակերտներուն հետ սեղան նստած էին, Հին Ուխտի Զատիկը կատարելէն ետք, Նոր Ուխտի Զատիկը հաստատեց Հացը առնելով ըսաւ. «Առէ՛ք կերէ՛ք, ասիկա իմ մարմինս է» (Մտ 26.26), ապա բաժակը առաւ ու ըսաւ. «Ամենէն ալ խմեցէ՛ք ասկէ, ասիկա իմ Նոր Ուխտի արիւնն է» (Մտ 26.28), եւ գայն Առաքելներուն հաղորդելով պատուիրեց միշտ կատարել հաղորդութեան խորհուրդը, ըսելով. «Այս մէկը կատարեցէ՛ք իմ յիշատակիս համար» (Ս. Կրթ. 11.24):